ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» օգոստոսի 2021թ. № 302

«ՌՈՒՍՋՈԲ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 70-Ա որոշումը և «ՌՈՒՍՋՈԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող փողոցային լուսավորության թվով երկու հենասյուներ, որոնցից մեկը գտնվում է ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փ., 124 հասցեում գտնվող դեղատան հարևանությամբ, իսկ մյուսը գտնվում է ք. Սպիտակ, Ալ. Մանուկյան փ. 19 հասցեում գտնվող դեղատան հարևանությամբ արտաքին գովազդ տեղադրելու նպատակով 2 000 ՀՀ դրամ ամսական վարձավճարով, մեկ տարի ժամկետով տրամադրել «ՌՈՒՍՋՈԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 16
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2021 թվականի № 303

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետով, հիմք ընդունելով Սուսաննա Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի օգոստոսի 20-ին Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-29) Սուսաննա Խաչատրյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

Վերջին աշխատանքային օր համարել 2021 թվականի օգոստոսի 19-ը:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սույն որոշումն ընդունել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2021 թվականի N 304

ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2.2-րդ և 3-րդ մասերով, 14.1-րդ հոդվածի 4-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնը 2021 թվականի օգոստոսի 16-ից թափուր է, իսկ նույն բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-29) համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող Սուսաննա Խաչատրյանը բավարարում է տվյալ թափուր պաշտոնը արտամրցութային կարգով զբաղեցնելու համար սահմանված պահանջները, հիմք ընդունելով Սուսաննա Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Սուսաննա Վարուժանի Խաչատրյանին 2021 թվականի օգոստոսի 20-ից նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-16) համայնքային ծառայության պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստատված պաշտոնային դրույքաչափի՝ 180 000 (հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ: Աշխատավարձը համարել փոփոխված Սպիտակ համայնքի ավագանու կողմից պաշտոնային դրույքաչափի փոփոխմանը համապատասխան:

3. Սուսաննա Վարուժանի Խաչատրյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2021թ. № 305

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԹԻՎ 119 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 5-ի «Սոցիալական հարցերի հանձնաժողով ստեղծելու և Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 22-ի թիվ 97 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 119 որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Սպիտակ համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության շրջանակներում համայնքի բնակիչներին սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություն տալու համար ստեղծել սոցիալական հարցերի հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Մաթոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ.

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Ազգանուշ Ֆրանգյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Վեներա Խաչատրյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող.

Հանձնաժողովի անդամներ՝

Վարուժան Ապրեսյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Նորայր Յարմալոյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ – իրավաբան,

Լուսինե Օհանյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ,

Մելանյա Դանիելյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

Կարինե Լամբարյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի 1-ին կարգի մասնագետ-գանձապահ,

Տիգրան Հակոբյան – Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),

Վարուժան Սահակյան–Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ),

Թաղամասերում լիազոր ներկայացուցիչներ – ըստ բնակչի բնակության վայրի,

Արտաշես Կարապետյան – Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային մասնաճյուղի Սպիտակ համայնքի ներկայացուցիչ (համաձայնությամբ)»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2021 թվականի N 306

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգի» 11-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1.2021 թվականի սեպտեմբերի 24-ին անցկացնել մրցույթներ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար.

1) Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.1-1) - ժամը 11:00-ին,

2) Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ (ծածկագիր 2.1-5) - ժամը 15:00-ին:

2. Մրցույթներն անցկացնել Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում:

3.Մրցույթների անցկացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել հայտարարություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» դեկտեմբեր 2021թ. № 307

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 252 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԺԵՆՅԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0490-0112 կադաստրային ծածկագրով հողամասը Սպիտակի քաղաքապետի 2004 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 257 որոշմամբ ավտոտնակ կառուցելու նպատակով վարձակալությամբ, 10 տարի ժամկետով հատկացվել է Վահե Թաթուլյանին, ով 2007 թվականին կառուցել է ավտոտնակ և գույքը տիրապետել է մինչ 2017 թվականի նոյեմբեր ամիսը, վճարել հողամասի վարձավճարը, Վահե Թաթուլյանի մահից հետո գույքը շարունակում է տիրապետել կինը՝ Ժենյա Սերգեյի Մակարյանը, հիմք ընդունելով Ժենյա Սերգեյի Մակարյանի դիմումը և Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 15-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան փողոց թիվ 252 հասցեում գտնվող անշարժ գույքը վարձակալությամբ Ժենյա Սերգեյի Մակարյանին տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 43-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ պետական գրանցման վկայական թիվ 13052021-06-0034), «քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 252» հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 06-006-0490-0112 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,002 հեկտար մակերեսով բնակելի գործառնական նշանակության հողամասը և դրա վրա գտնվող 19,95 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, վարձակալության իրավունքով, 99 տարի ժամկետով, 6 000 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով տրամադրել Ժենյա Սերգեյի Մակարյանին:

2. Ժենյա Սերգեյի Մակարյանի հետ կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

4. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սահմանված կարգով և ժամկետներում ապահովել տարեկան վարձավճարների գանձումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _______________ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 19

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2021թ. № 308

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԹԻՎ 291 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 291 որոշման 3-րդ կետն ընդունվել է՝ հակասելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 55-րդ կետի պահանջներին՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի «Մուրացան փողոցի վրա գտնվող՝ Աղավնի Ռուբենի Սարգսյանի կողմից տիրապետվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու, հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 291 որոշման վերնագրից հանել «և հասցե տրամադրելու» բառերը:

2. Անվավեր ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի «Մուրացան փողոցի վրա գտնվող՝ Աղավնի Ռուբենի Սարգսյանի կողմից տիրապետվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու, հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 291 որոշման 3-րդ կետը:

3. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի «Մուրացան փողոցի վրա գտնվող՝ Աղավնի Ռուբենի Սարգսյանի կողմից տիրապետվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու, հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 291 որոշման 4-րդ կետից հանել «և տրամադրված հասցեն» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոսի 19
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«20» օգոստոս 2021թ. № 309

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԹԻՎ 290 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 291 որոշման 3-րդ կետն ընդունվել է՝ հակասելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 55-րդ կետի պահանջներին՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի «Արշակ Գրիգորի Ալթունյանին պատկանող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 290 որոշման վերնագրից հանել «և հասցե տրամադրելու» բառերը:

2. Անվավեր ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի «Արշակ Գրիգորի Ալթունյանին պատկանող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 290 որոշման 2-րդ կետը:

3. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսի 2-ի «Արշակ Գրիգորի Ալթունյանին պատկանող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 290 որոշման 3-րդ կետից հանել «և տրամադրված հասցեն» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. օգոստոս 20
ք.Սպիտակ